# Գիտությունը ազգային սեփականություն է

*Սկիզբը՝ էջ 1*

ՀՀ նախագահի խոսքերով, ակադեմիայի ստեղծմամբ նոր դարաշրջան սկսվեց Հայաստանի գիտության պատմության մեջ, այն արձանագրեց աննախադեպ վերելք, դարձավ Խորհրդային Միության հզոր գիտական կենտրոններից մեկը: Նա ասաց, որ մինչեւ անկախությունը ՀՀ ԳԱԱ-ն ձեւված էր խորհրդային հսկայական պետության համար, որի գիտության զարգացման ռազմավարությունը կանխորոշել էր ակադեմիայի կառուցվածքն ու հետազոտությունների ուղղությունները: «**Հայաստանի անկախացումից հետո ստեղծվել է նոր իրավիճակ, մեր առջեւ այսօր ծառացած են նոր խնդիրներ: Կարծում եմ, երկիրն ապրում է բարեփոխումների շրջան, եւ ակադեմիան նույնպես ներքին բարեփոխումների կարիք ունի, իսկ տեմպերն ու ուղիները պետք է որոշենք դուք ինքներդ՝ հաշվի առնելով իրողությունները**», -նշեց Ռ. Քոչարյանը:




Նա նկատեց, որ ակադեմիայում հետեւողականորեն հաղթահարում են այն դժվարությունները, որոնցից խուսափելն անհնար է եւ նշեց, որ ինքը մեծ լավատեսությամբ է նայում Հայաստանի գիտության զարգացման հեռանկարներին: «**Գիտությունն այն կարեւոր գործոնն է, որի շնորհիվ Հայաստանը կարող է դառնալ արդիական երկիր, ունենալ գիտատար տնտեսություն: Հայաստանը պետք է լինի մտավոր ծառայությունների տարածաշրջանային կենտրոն: Այս բանաձեւը ենթադրում է հստակ վերաբերմունք եւ ուշադրություն գիտության նկատմամբ, հակառակ դեպքում, նպատակն անհասանելի կլինի**», - ասաց նախագահ Ռ. Քոչարյանը: Նշված նպատակներին հասնելու գործում ՀՀ նախագահը շեշտեց ԳԱԱ-ի գիտնականների եւ ինստիտուտների գործունեության դերը: Երկրի ղեկավարը, որպես կառույցի կարեւոր առաքելություն, ընդգծեց գիտնականների նոր սերնդի պատրաստումը:

Խոստովանելով, որ ինքը գիտնական չէ, երկրի նախագահը խոստացավ մենեջեր լինել գիտության համար՝ առավել մեծ ուշադրություն եւ հստակ վերաբերմունք ցուցաբերելով ոլորտի հանդեպ: Այդ ուշադրության առաջին դրսեւորումը եղավ հենց այդ դահլիճում. նախագահի հրամանագրերով գիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների համար «Մխիթար Հերացի», «Անանիա Շիրակացի» մեդալներով, ինչպես նաեւ պատվոգրերով պարգեւատրված մի խումբ գիտնականներ անձամբ նախագահից ստացան իրենց պարգեւները:

Ապա շնորհավորելու հերթը հյուրերինն էր: ՌԴ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Յուրի Օսիպովը, ողջունելով իր հայ կոլեգաներին, հիշեցրեց, որ Հայաստանում գիտական մտքի արմատները դարերի խորքն են ձգվում, եւ հայ գիտությունը համաշխարհային գիտական գանձարանի զարդն է: Նաեւ ասաց, թե հպարտ է, որ շատ հայ գիտնականներ նաեւ իրենց գիտությունների ակադեմիայի անդամներ են եղել:

Վրաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ալբերտ Տավխելիձեն Ֆ. Սարգսյանին փոխանցեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի շնորհավորանքները եւ ակադեմիայի 60-ամյակի, եւ Ֆադեյ Սարգսյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Հայ գիտնականներին շնորհավորեցին նաեւ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՌԴ հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, ԿԳ նախարար Սերգո Երիցյանը եւ ուրիշներ: Նախարարը մեր գիտնականներին մինչ այժմ տարած բարոյական հաղթանակների հետ միասին նաեւ նյութական հաղթանակներ մաղթեց՝ հավաստիացնելով, որ պետությունն այսուհետ ի վիճակի է լինելու աջակցել նրանց այդ գործում:




Շնորհավորանքի, բարեմաղթանքի ջերմ խոսքերից շոյված՝ ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանն էլ յուրովի շնորհակալություն հայտնեց: Նա ոսկե մեդալներ հանձնեց ՌԴ եւ Վրաստանի գիտությունների ակադեմիաների պրեզիդենտներ Յուրի Օսիպովին եւ Ալբերտ Տավխելիձեին, իսկ նրանց, ովքեր որեւէ կերպ աջակցել եւ օժանդակել են գիտությունների ակադեմիային կամ, ընդհանրապես, գիտության զարգացմանը, շնորհեց ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչումներ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 60-ամյակին նվիրված միջոցառումներից հետո էլ մեր գիտնականները կշարունակեն ապրել գիտության մշակի իրենց տքնաջան կյանքը՝ սպասելով պետության հստակ ուշադրությանը: Առայժմ իր 60-ամյա պատմության ընթացքում 189 ակադեմիկոս, 39 արտասահմանյան անդամ, 16 պատվավոր անդամ ունեցող ակադեմիայի շուրջ 4400 աշխատակիցները իրենց առավել քան համեստ եկամուտներով փորձում են ըմբռնումով մոտենալ պետության հնարավորություններին, առավել եւս՝ իրենց պահանջներով չփչացնել «հոգու եւ ինտելեկտի տոնը», քանզի տոնը, այնուամենայնիվ, բոլորինն է:

*Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ*